"Շատ հարցնել, հարցրածը ըմբռնել, ըմբռնածը հաղորդել". այս երեք բանը աշակերտին վարժապետից գերազանցուցանում է։

Ինչ որ յայտնի չէ, պէտք է հարցնել վարժապետից, դասակիցներից, գիրքերից։ Ըմբռնումը այն ժամանակ կատարուում է, երբ խմացած և հասկացած բանը յիշողութեան է զրուում։ Իսկ հաղորդումը այն ժամանակ, երբ խմացած և ըմբռնածը տրվում է ուրիշին։ Վերջին իրողութիւնը շատ քիչ է գործ դրվում. բայց պէտք է այդ բանը սովորութիւն անել. որովհետև դա ամրացնում է և անակնկալի օգուտ է բերում։ Ուրիշին ուսուցանելով, մենք ինքներս ուսանում ենք։

Այս կանոնը այն ժամանակ է ճիշդ կատարուում, երբ վարժապետը նախ ինքն է ուսուցանում, և յետոյ ուսանողին պատուիրում է ուսուցանել, և ուսուցանել նոյն իսկ եղանակով և նոյն իսկ կարգով, ինչպէս ինքը սովորեցաւ։

Այդ վարժմունքը ահա ինչ օգուտ է բերում. Ա) դրանով վարժապետը աշակերտներին կըպարտաւորէ ուշադիր լինել (ի՞նչպէս աշակերտը կըկարողանայ ուսուցանել, եթէ նա ուշադիր չէր). Բ) վարժապետը այդ ժամանակ համոզուում է, թէ արդեօք ամենայն աշակերտը հասկացաւ այն բոլորը՝ ինչ որ ինքը պատմեց. Գ) այսպէս անդադար կրկնելիս վերջապէս առաջ կերթան և դանդաղ գլուխները. Դ) այդ կերպով դասը մինչ այն աստիճան կըմբռնուի, որ դժուար մոռանալու կըդառնայ. Ե) այս վարժութիւններից զրգռուում է աշակերտների խելքը և ուսումնասիրութիւնը։

(Շարունակելի)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ Ի ԲԵՌԼԻՆ

(Շարունակութիւն և վերջ)

Պ. Հոֆֆմանի ամեն զրութիւնքը բովանդակ ժողովի կողմէն միաձայն ընդունուեցան, և $1\frac{1}{2}$ ժամին առաջին օրուայ նիստը աւարտեցաւ։ 3 ժամին հանդիսականք գնացին մի կոնսեռ լսելու. իսկ երեկոյեան վերստին հաւաքուեցան գործաւորներու ընկերութեանը պատկանեալ մեծ դահլիճի և պարտէզի մէջ. ուր վարժապետները մի փառաւոր ընթրիք և խնճոյք պատրաստած էին։ Զմայլեցուցիչ՝ անմոռանալի ժամերը՝ որ ես շնորհ ունեցայ վայելել այն զիշեր, տկար զրչովս չեմ կարող ես նկարագրել .....։

Երկրորդ օրը ամենէն առաջ խօսեց Պ. Վիխարդ Լանդէն "Հռենոսեան թերթերու" խմբագիրը, մանկավարժական ընկերութեան սիրելին, ժողովի սիրտը, ինչպէս որ և ստեպ կ'անուանուի իր ազատ և կորով մտքի՝ տարօրինակ զօրեղ լեզուի և եռանդուն հայրենասիրութեան համար։ "Վարժարանը դաստիարակչական սկզբունքներու վրայ."— այդ խնդրի մասին էր նորա մեծ ճառը, որ բոլոր հանդիսականներու սիրտը յափշտակեց և անթիւ ծափահարութեամբ ընդմիջեցաւ, թէև նա յանպատրաստից խօսած էր։

Աւասիկ այդ ճառի համառօտ պարունակութիւնը։

Իւրաքանչիւր սերունդ երկու մասն ունի. մէկ մասը կազմուած է չափահասներէն, միւսը երիտասարդներէն։ Չափահասները պարտաւոր են կեանքի գործը կատարել, այսինքն՝ Կուլտուրի յառաջադիմութեանը սպասաւորել և ջանալ, որ նա որքան կարելի է՝ շուտ ընթանայ։ Կուլտուր ասելով Պ. Ատենախօսը կը հասկանայ 'այն բարոյական ու նիւթական միջոցները, զոր մարդս բնութեան հետ մարտնչելով ձեռք բերած է, և այն յառաջադէմ փոփոխութիւնը, որ նա ինքը այդ միջոցին կրած է։ Իբրև կուլտուրին սպասաւորող գործաւոր, անհատական մարդը միայն մի միջոց է նպատակի համար. սակայն որպէս իւրաքանչիւր արարած աշխարհիս վրայ, այո՛ որպէս և իւրաքանչիւր առողջ անդամ օրգանիզմի մէջ, մարդս չէ թէ միայն մի լոկ միջոց է նպատակի համար, այլ և ինքը նպատակ, այսինքն թէ նորա կենաց վսեմագոյն խորհուրդը նորա սեփական ազատ անձի կրթութիւն ու զարգացումն է։ Երկաթուղիներու և հեռագիծներու օրերը, երբոր 'տարածութեան ու ժամանակի դէմ մահու չափ պատերազմ քարոզուած է, երբ որ մարդկային գործունէու-

թեան առջև դրուած բիւրաւոր արգելքները մի առ մի կը խորտակուին, շատ հեշտ կարող է պատահել, որ մարդ ինքն ևս մի տեսակ երկաթուղի և թէլէգրաֆ դառնայ, իր կեանքի բարձրագոյն նպատակը դիւրաւ մոռնայ և 'ի թշուառ մեքենական մի էակ փոխարկուելով՝ իր ազատ, շրջափակ, ինքը զինքը նպատակ ճանաչող անձնաւորութիւնը միանգամայն աչքէ կորցնէ։

Կենդանի սերունդի երկրորդ կէսն է երիտասարդութիւնը, որ մի պահեստի դումարտակ կը կազմէ (ռեզերվ) և հանդէս կելանէ. երբ որ առաջուայ զինուորները պարտուին կամ դաշտէն հեռանան, նա յանձն կ'առնէ առաջուց գործը, կը շարունակէ և իր ուսերու վրայ յառաջ կը տանէ։ Երիտասարդութիւնը պարտաւոր է ուրեմն մարդկային կենաց կրկին նպատակներուն սպասաւորել ամենայն զօրութեամբ, այսինքն՝ մէկ կողմէն ընդհանուր աշխատանքին–կուլտուրին — մասնակցիլ և միւս կողմէն իր սեփական անձնաւորութիւնը, իր հոգեկան ու մտաւոր ընդունակութիւնքը որքան կարելի է՝ զարգացնել, մշակել ու հաստատակամ կորովի մարդ դառնալ։ Բայց այդ ամենը կարող է անել միայն դաստիարակութեամբ, միայն այն ժամանակ, երբ որ կրթուի ու լուսաւորուի։

Մարդկութեան նախկին դաստիարակիչքն էին հայրն ու մայրը. սակայն յետոյ՝ երբ որ կենսական պիտոյքները բազմացան, ու գիտութիւնքը անթիւ ճիւղեր սկսան արձակել, մօր ու հօր տրված կրթութիւնը թերի երևեցաւ, և ընտանիքին օգնական պէտք եղաւ։ Այդ պէտքի պատճառով առանձին ուսուցիչներ հանդէս եկան, առանձին մանկավարժական գիտութիւն զոյացաւ, և ի վերջոյ բազմատեսակ ուսումնարաններ հիմնուեցան, որք ընդհանրապէս "վարժարան" կը կոչուին։ Ուրեմն Էրէ՛ՐԷՆ ասելով պէտք է հասկանալ բոլոր այն հաստատութիւնքը, որք հիմնուած են մանուկ սերունդի կրթութեան համար 'ի նպաստ և 'ի շարունակութիւն ընտանեկան դաստիարակութեան։

Արդ՝ երկու տեսակ վարժարաններ կան կամ պիտի լինին. նախ սպեսիալ —մասնաւոր— վարժարաններ, որք առանձին կենսական պաշտօններու համար կը պատրաստեն. և ապա ազգային վարժարաններ, որք ընդհանուր մարդկային կրթութիւն կուտան աշակերտներուն։ Ազգային վարժարանը բնականապէս յերկու կարգ պէտք է բաժանել — 'ի ստորին և 'ի բարձրագոյն. ստորինի մէջ գիտութեան այն փոքր մասը միայն կը հաղորդուի, որ իւրաքանչիւր Գերմանացի տէրութեան ստիպմամբ արդէն պարտաւոր է ստանալ։ Այդ ստորին կրթութիւնը ստանալէն յետոյ՝ ազգի որդին իսկոյն արհեստի ձեռն կ'արկանէ, մեքենական, անդաստիարակիչ աշխատանք կըսկսէ, և այդպէս նորա մտաւոր ու ոգեկան զարգացումը շուտով կը թօշնի։ Ուստի յօգուտ նոր սերունդի անշուշտ հարկաւոր է, որ այդ ստորին՝ նախակրթական բաժնին ուրիշ մի բաժին էլ հետևէ, ուր որ պատանին՝ զեռ արհեստի չը մտած, կարող լինէր իր ուսումը շարունակել և մտաւորապէս կազդուրուիլ. այդ երկրորդ բաժինը՝ կամ կարգը՝ կը լինի բարձրագոյն ազգային վարժարան։

"Կրթութիւնը մի և նոյն է, թէ զօրութիւն, ազատութիւն, բարօրութիւն, զորա վրայ՝ կարծեմ՝ ոչ ոք չի տարակուսիլ այս օր", կասէ Գ. Լանդէն, "Կրթութիւնը աղնուագոյն է քան ամենայն ինչ ոսկի պատուական, և պէտք է՝ որ միշտ ու միշտ մթերուի ու կուտուի ազգի մէջ. թէ և այդ շատ իրաւ է, բայց կան ազգեր և անձինք, որք նորա յարգը լեռվին չեն հասկանար. կրթութեան զինը նա միայն պարզ կը ճանաչէ, ով որ ինքը կրթուած է։ Ուրեմն պարծա՞նք այն աղնուամիտ տէրունական մարդիկներուն, որք ազգի վրայ հանապազ խնամ տանելով, ստիպած են զնա ուսում առնելու, և փա՞ռք այն ամեն մարդասէր ընկերութիւններուն, որք ազգին աւելի կրթութիւն տալու համար միշտ հնարներ որոնած են և անդադար կ'որոնեն։ Ես հաստատ համոզուած եմ, որ շուտով կ'գայ մի օր, երբ որ և է մանուկի կրթութիւնը նորա ծնողներու նիւթական վիճակէն այլ ևս կախում չի ունենար, երբ իւրաքանչիւր մարդկային զաւակ անարգել կարող կը լինի այնչափ ուսանիլ, որչափ նորա ընդունակութիւնքը ներեն, և այն դառնալ, ինչ որ Արարչէն ընդունած ձիրքերուն համեմատ դառնալ կարող է"։

Խօսքը Կլասսիքական և Ռեալ գիմնազիներու վրայ դարձնելով, Գ. Լանդէն կասէր, թէ Գեր-

մանիայ մէջ այդ երկու վարժարանները հաւասար իրաւունք չունին, թէ ռնալ գիմնազը մինչև այս օրս դեռ կլասսիքական գիմնազի վայելած արտօնութիւններէն զուրկ է։ "Դորա պատճառը պէտք է որոնել այն մոլար կարծեաց մէջ, որ իբր թէ ռեալ գիմնազը իր մաթեմատիկայով ու բնագիտութեամբ համրակներու իդէալական մտքի, կեանքի ու ձգտողութեանց հիմքը զիւրաւ կը խախտէ, կը կործանէ, և իբր թէ կորստաբեր մատերիալիզմի (նիւթապաշտութիւն) առջև դուռ կը բանայ։ Ես պէտք է խոստովանիմ, որ ապշութիւն ու զարմանք կը տիրեն ինձ, երբ որ այդ տեսակ թշուառական ու փուճ մտքեր կը լսեմ։ Ոչ մի գիտութիւն ճշմարտութիւն ասուած բանը այնպէս պարզ ու շօշափելի չի ներկայացներ մեզ, ինչպէս որ մաթեմատիկան իր անդրդուելի, ճիշդ կանոններով. իսկ ինչ որ բնագիտութեան կը վերաբերի,—դա մի փառահեղ տաճար է, ուր Աստուած ինքը ամենայն ժամ մեծարարբառ քարոզ կը կարդայ, և բնութեան օրէնքները արտայայտութիւն են Աստուածային անքննելի խորհրդոց. որով տիեզերք համօրէն կան ու կառաջնորդուին։ Ո՞րպէս կարող է մարդ նիւթապաշտ դառնալ, երբ որ ամենաբարձրեալ Ոգւոյ բանն իր ականջքը լսէ, նորա սքանչելի գործերն իր աչքը իսկ տեսնէ, նորա շնչոյ կենսարեր ազդմունքը անմիջաբար իր վրայ չղայ . . . . Ա՛չ, բնագիտութիւնը ամենևին վտանգ չի բերեր մեզ, այլ միայն բիւրաւոր բարիք և բիւրաւոր օրհնէնք. և ռեալ գիմնազներու դէմ կասկած ունենալը՝ սնոտի ու թիւր նախապաշարմունք է, և ոչ այլ ինչ"։

"Վերջին ժամանակներս շատ անդամ խնդիր ծագած է, թէ ո՞վ է դպրոցի տէրը և ո՞վ պիտի հիմնարկէ ու տնօրինէ զնոսա։ Արդ ես ևս կը ցանկամ անուանել մի տէր, որ ամէն տէրերէն բարձր է,—այդ է Ոգին, Տիկնայք և Պարոնայք, մի՛ երկընչիք Ոգի բառը լսելով, չար ոգի չէ դա, այլ Գերմանական մանկավարժութեան բարի ոգին է, որ կուսուցանէ մեզ, եթէ ամենայն ինչ վարժարան պարտաւոր է անշուշտ որպէս ուսուցիչ, նոյնպէս և դաստիարակիչ հիմնարկութեան լինիլ։ Այդ դաղափարը խստիւ կը պահանջէ, որ մանաւանդ ազգային վարժարաններու մէջ ընդհանուր մարդկային կրթութեանը աւելի ընդարձակութիւն և ժամանակ շնորհուի, քան մինչև այժմ շնորհուած էր։ Մեք կը տեսնենք, որ ազգային աշակերտը սովորաբար հոգւով ու մարմնով տակաւին անհաս կեանք կը մտնէ և գործ կ'որոնէ արհեստաւորի մօտ, ուր նա կրօնական ու բարոյական կողմէն զեռ շատ սակաւ կրթուած զոլով, չի կարող 'ի հարկէ դէմ կենալ կեանքի փոթորիկներուն։ Նորա ուսումը շատ նուազ է, չի բաւեր մեր օրուայ գործնական կեանքին, որ բռնօրէն խելք ու գիտութիւն կը պահանջէ մեզմէն։ Արհեստն այժմ պատերազմ ունի դրամի հետ, և միայն խելացի ընկերութիւնը, — ասոցիացիան—որն որ նոյնպէս առանց ուսման չի գոյանար, կարող է օգնել մշակին։ Պէտք է, որ մշակը անպատճառ ֆաբրիքա դառնայ, մի և նոյն է, թէ իբրև անհատ և թէ իբրև անդամ որ և է մեծ ընկերութեան։ Իրերու այդ վիճակին նայելով, հարկ է՝ որ վերէն ամենայն սաստկութեամբ կանոնաւոր վարժարան յաճախելու ստիպմունք դրուի ամենքի վրայ. հարկ է, որ մի ամուր պատնէշ շինուի ինդուստրիայի (արուեստի) յարձակմանց դէմ, որն որ պատանիներու ձեռքէն կրթուելու բնական իրաւունքը յափշտակելով, ոգւով ու մարմնով թերահաս մանուկ սերունդը իր գործարաններուն մէջ կը փակէ, և այն տեղ զնոսա չարաչար կը խոշտանգէ։ Այդ զարհուրելի սպիտակ ստրկութեան դէմ ուժգնապէս կը բողոքէ, և կրօնը և մարդասիրութիւնը և մանկավարժութիւնը, և մեք իրաւունք չունինք պարծելու մեր արդի քաղաքակրթութեամբ, մինչև որ այդ Մոլոխը, որն որ այնքան մարդկային աղնիւ զոհեր լափած է, խսպառ չը խորտակուի, մինչև որ այդ սպիտակ, արդարև սեւէն շատ վատթար ստրկութիւնը մեր մէջէն միանդամայն չանհետանայ։ Վերջապէս ժամանակ է, որ հանդամանքներու ստիպմամբ սկզբնական կրթութենէն յետոյ՝ իսկոյն գործնական ասպարէզ մտնող չքաւորպատանիներու համար՝ որպէս զի ղերու, նոյնպէս և քաղաքներու մէջ, ուրեմն ամենայն տեղ բուրսիոյն ֆոնտերը հաստատուին, որք կարող լինէին համապատասխանել դաստիարակութեան կրկին նպատակներուն։ Այդ տեսակ վարժարաններու ծանր կարևորութիւնը, օգուտն ու արդիւն-

քը լիապէս ճանաչելով. շատերն արդէն նոցա հիմնարկութեան համար ձայն կարդացին, և ամենէն հզօր Պ. Զայդիարթը իր յայտնի գրուածներու մէջ"։—Ազգի բարձրագոյն ու հեռաւոր կրթութիւնը արժանապէս օգնելու համար պէտք է որ գիւղական վարժապետները ինքեանք ևս աւելի բարձր կրթուած և ուսեալ մարդիկ լինին. շատ սուտ ու վնասակար է այս կարծիքը, որ իբր թէ սակաւակիրթ վարժապետն ևս կարող է սկզբնական տարերքը լաւ հաղորդել աշակերտին։

Մի տարօրինակ երևոյթ է այս, որ ազգային վարժապետներու մէջ մասնաւոր (սպեսիալ) կրթութեան վրայ աւելի մեծ ուշադրութիւն կը դրուի, քան թէ ընդհանուր մարդկային կրթութեան վրայ, որ և առաջինը շատ վաղ կըսկսուի՝ վնաս վերջնոյն, այն ինչ պէտք էր, որ աշակերտները նախ ընդհանուր կրթութիւն հասարակ հիմունքներ ստանային, և յետոյ արդէն որոշուած կոչման համար մասնաւոր (սպեսիալ) կրթութեանը ձեռն արկանէին։ Սովորաբար կը տեսնենք, որ 9 կամ 10 տարեկան հասակը արդէն առանձին կոչման համար կը պատրաստուի, և իսկոյն մասնաւոր գիտնական ուսում ստանալով՝ ընդհանուր կրթութենէն խսպառ թափուր ու զուրկ կը մնայ։ Այդ տեսակ թիւր ընթացքը արդի մանկավարժութեան սկզբունքներուն հակառակ է. մանկավարժական գիտութիւնը կը պահանջէ, որ ընդհանուր մարդկային կրթութիւնը աւելի բարձր իրաւունք և աւելի մեծ կշիռ ստանայ ազգային վարժարանի մէջ, և դէթ մինչև աշակերտաց 14-դ տարեկան հասակը կանոնաւոր շարունակուի։—Ազգային վարժարանի նպատակն է զմարդն մարդ կրթել և նորա բոլոր զօրութիւնքը ներդաշնակ զարգացնել. այդ նպատակին հաւատարիմ մնալու համար պէտք է՝ որ վարժարանը առողջապահութեան ու մարմնոյ կազդուրման վրայ նոյն չափ խնամ տանէ, որչափ և մտաւոր ու հոգեկան զարգացման վրայ, ուրեմն և գիմնաստիկայի—այսինքն՝ մարմնամարզութեան—գինը լիապէս ճանաչէ։

Դասատուութեան նիւթի վրայ Պ. Լանգէն ոչ ինչ չի յիշեր. իսկ դասատուութեան ոճի—մեթոդի—նկատմամբ միայն համառօտիւ կը կրկնէ այն ճշմարտութիւնքը, որք Պեստալոցցիէն յետոյ ամեն բանիրուն մանկավարժներուն վաղուց արդէն յայտնի են, այսինքն՝ թէ ազգային վարժարանի մէջ դասատուութեան ոճը հայեցողական (անշաուլիս), գենեթիքական ու զարգացուցիչ պէտք է լինի։ Մեթոդ ասուած բանը՝ մանկավարժութեան մէջ այնպիսի կարևոր խնդիր է, որ նորա մասին այժմ հակիրճ խօսելու փոխարէն՝ ես աւելի լաւ կը համարիմ մէկ ուրիշ անգամ առանձին յօդուածով բացատրել նորա նշանակութիւնը և նորա ամեն մի տեսակներու վրայ ըստ կարելոյն լիքը տեղեկութիւն տալ արդի մանկավարժական ուսման անգիտակ ընթերցողներուս։—Հայեցողութեան մասին Պ. Լանգէն Շոփենհաուէր փիլիսոփայի խօսքերով կասէ, թէ "Հայեցողութիւնքը մարդկային ոգւոյ մէջ պատրաստի դրամ են (ֆոնդոն). իսկ վերացական գաղափարները՝ տոմսակներ. եթէ հայեցողութիւնքը պակսին կամ նուազին, ոգին կը նմանի կոտր ընկած բանկի (դրամատուն), որ իր տոմսակներու փոխարէն պատրաստի դրամ հատուցանելու անկարող է"։—Պ. ատենախօսը շատ մեծ ուշադրութիւն կը դարձնէ բարոյական-կրօնական կրթութեան վրայ, և կը ցանկայ՝ որ սա միայն լոկ յիշողութեան գործ չը լինի, այլ նոյն մանկավարժական օրէնքներով աւանդուի աշակերտին, որպէս և միւս ուսանելի առարկաները։

Բարձրագոյն ազգային վարժարաններուն դառնալով՝ Պ. Լանգէն կասէ, որ նոցա մէջ հայրենագիտութեան, բնագիտութեան ու նոր լեզուներու վրայ աւելի շեշտ պէտք է դրուի, և աշակերտաց առողջութեան ու մարմնոյ կազդուրման վրայ, որպէս և ստորին վարժարանի մէջ, ամենափութաջան կերպիւ խնամ տարուի։—Մենք կ'ուսանինք կեանքի և ոչ վարժարանի համար. ուստի շատ բնական է, որ ազգային վարժարանը գործական կեանքի պահանջմունքը միշտ՝ նկատի պէտք է ունենայ, ու տեղական պիտոյքներուն յարմարելու աշխատէ, սակայն ոչ կուրօրէն. որովհետև այն ժամանակ նա հեշտ կարող է դաստիարակչական սկզբունքը աչքէ թողնելով, աշակերտաց բարոյական զարգացման դէմ՝ մեղանչել, ու լոկ շահասիրութեանը ծառայ դառնալ։ Վարժարանը կարող է հեռու մնալ այդ վտանգէն, և ամենայն տեսակ ուսանելի առարկայ աղնուացուցիչ՝ ոգե-

կրթիչ եղանակով հաղորդել աշակերտին, եթէ նա բանիրուն վարժապետներ ունենայ, ըստ որում գլխաւոր բանը այն չէ թէ ի՞նչ կ'ուսուցանենք մեք, այլ այն՝ թէ ո՞րպէս կ'ուսուցանենք. և հնարագետ, հանճարեղ ուսուցիչը գիտէ ամենայն ինչ նիւթ 'ի մեթոդիքական և 'ի դաստիարակչական ոսկի վերածել։

,,Բայց գժբաղդաբար այդ տեսակ ուսուցիչներ ունէալ վարժարաններու համար տակաւին սակաւ են առ մեզ", կասէ Պ. առենախօսը։ ,,Այդ կողմանէ մեք Ֆրանսիայէն գրեթէ յետ ընկած ենք։ Պարոն նախագահը ամէն ազգերէն բան ունենալու խորհուրդ տուաւ մեզ երեկ։ Հետեւինք նորա խորհրդին։ Մեք Գերմանացիքս դաստիարակիչ ազգ կը համարինք զմեզ աշխարհիս վրայ, և հպարտ ենք մեր տեսական ու գործնական մանկավարժութեամբ. սակայն զգոյշ լինինք, որ մի՛ գուցէ ինքնահաւան կուրութեան մեջ ընկնինք ու զրացին դերազանցէ քան զմեզ։

"Ֆրանսիոյ ազգային լուսաւորութեան նախարարը, աղնուամիտ ու հաստատակամ Տիւրուին Կլիւնիի մեջ նորերս առանձին Սեմինար 'ի լոյս կոչեց ուէալուսոյց վարժապետներու համար. այդ հիմնարկութեան պրոֆեսորներէն մին որպէս պատգամաւոր մեր մեջ է այս օր։ Սեմինարը բացուած է առաջ Բենեդիկթեան ուխտին պատկանեալ հոյակապ վանքի մեջ, որոյ գեղեցիկ շրջակայքը հետու կը պահեն զաշակերտները մայրաքաղաքի վտանգներէն ու փոթորիկներէն։ Աշակերտը բնակարան և սեղան կը ստանայ, և դորա փոխարէն 800 ֆր. կը հատուցանէ. բայց եթէ հուր չունենայ, ամէն բան ձրի կը վայելէ։ Հիմնարկութեան համար տէրութիւնը իւրաքանչիւր տարի համարեա՝ 150,000 ֆր. կը ծախսէ։—Սեմինար մտնելու համար պէտք է՝ որ մի երիտասարդ գիմնազիական դուրսն արդէն աւարտած լինի. աւելի սիրով կընդունուին այն անձինքը, որք առաջուց դաստիարակի պաշտօն վարած կրլլլ, իրենց կորովութիւնն ու եռանդը արդէն վկայած են։ Կլիւնիին տեսական, գործնական ու դաստիարակչական կրթութիւն կը հաղորդէ ապագայ ուէալ վարժապետներուն. տեսական գիտութիւնը նորա կը ստանան պրոֆեսորներու ընթերցմունքէն. գործնական հմտութիւնը շաբաթական բաղմաժամ փորձերէն. իսկ դաստիարակչական մասի կընտրանան բանիրուն մանկավարժի միջ վերատեսչութեամբ մեկ դպրոց կատարելով, որ 300ի չափ աշակերտ ունի իր մեջ։ Սեմինարն արդէն 200էն աւելի ուսանողներ ունի, մեկ ճոխ քիմիական գործարան (լաբորատորիա), մեկ հարուստ ֆիզիքական կաբինէթ, մեկ մեքենական արուեստանոց, ուր իր քիմիկոսներն ու ֆիզիկոսները ինքեանք իրենց գործիքը (ապարատ) պատրաստել ու պահպանել կը սովորին, և վերջապէս բուսաբանական պարտիզով շրջափակուած մեկ հոյակապ թանգարան (Մուզէում)։ Այլ և այլ գիտութեանց մեջ հրահանգող վարժապետաց թիւը 40էն աւելի է։ Աշակերտները երեք կարգ կը բաժնուին, 'ի բնագիտական, մաթեմաթիքական և լեզուաբանական։ Վերջին կարգի աշակերտները գլխաւորապէս նոր լեզուներու կը պարապին, և սոցա մեջ առաւել քաջ մարդուելու համար երկու տարեկան ուսմունքէն յետոյ՝ տարաշխարհ կ'առաքուին։— Պէտք է յիշել նա և, թէ վսեմամիտ մինիստրը բնաւ չի ցանկար, որ այդ վարժարանի մատուցած օգուտները որ և է զաւանութենէն կախումն ունենան, թէ և դրա համար նա շատ կը բարեսիրուի հոգևորականներու կողմէն։ Արժանի է գովեստի վերջապէս և այն հանգամանքը, որ Սեմինարի ընթերցարանը ամենայն տեսակ ուղղութեանց լրագիրներ կը ստանայ, մինչև անգամ և այնպիսի լրագիրներ, որք չարակամ կատաղութեամբ նոյն իսկ մինիստրի դէմ կը մարտնչեն, և որ ուրեմն ընթերցանութեան նկատմամբ վարժարանը նեղսիրտ վերատեսչութիւն չի բանեցներ։"

Պ. Լանդէն այսպէս կ'աւարտէ իր ճառը. "Անշուշտ պէտք է, որ դաստիարակչական տարրը ամենայն տեսակ վարժարաններու մեջ տիրապետէ. եթէ ոչ՝ կրթութեան կրկին նպատակներէն մին կ'անհետանայ, և վարժարանը կընկնի դատարկ ու նանիր շահասիրութեան (սպեկուլատիոն) պտղաբուրկ դաշտի վրայ։ Մինչև անգամ արհեստական, երկրագործական և այլ այսպիսի դպրոցները չի պէտք է բնաւ մոռնան, որ նոքա թէև վաճառական՝ արհեստաւոր կը պատրաստեն, խակայն և այնպէս պարտաւորութիւն ունին նախ և առաջ զմարդս՝

մարդ դաստիարակել մարդուն մէջ ճշմարիտ մարդկայինը յարուցանել և զարգացնել,,։

"Արդ՝ ես աւարտելու վրայ եմ, Պարոնայք ու տիկնայք իմ, եթէ ներուի ինձ 'ի վերջոյ այլ ևս մէկ խօսք ասելու, ես կասեմ Դէօթէի բառերով, թէ մեք միշտ մեր ինչ լինելովն աւելի դաստիարակիչ կըներգործենք՝ քան թէ մեր ճառերովն ու դասերով։ Մեզ պէտք է սուրբ սրտիւ մնտենալ նոր սերունդին։ Հատ դասարան ունեցող վարժարանի մէջ երբէք առանձին մի մարդ չի պէտք է իշխել, այլ միտքը, ոգին. վարժապետական ընկերութեան (ԴէլԷԳԷ-՝) ամէն մէկ անդամ պարտաւոր է զինքը այդ մտքին հաւատարիմ պաշտօնեայ համարել և երկիւղիւ ու պատկառանօք նկրտել, որ միշտ անմեղ ճեայ նորա դէմ։ Ընկերութիւնը պարտաւոր է զինքը իբրև մարդկութեան նման կամ մի լրութիւն դիտել և իր վրայ ցոյց տալ աշակերտներուն կեանքի վսեմ պատկերը, այսինքն—կենդանի օրինակ դառնալ անձնուիրութեան վասն բարոյական գաղափարին, օրինակ դառնալ աղնութեան և հաւատարմութեան, այո՛ և ինքնազոհութիւն 'ի սպաս հանրականին, օրինակ սիրոյ և համբերութեան, արդարութեան և ճշմարտութեան, արիասիրտ հաստատ բնաւորութեան և ջերմեռանդ պաշտօնավարութեան յօդուտ նոր սերունդի, ազգային ապագայի, և վերջապէս յօդուտ համօրէն մարդկութեան։ (Շարդ Եդիթ Ֆոֆոհարոնիան։)

Գ. Լանգէն իւր ճառը առանձին գրքով տպելու ժամանակ յետագայ դիտողութիւնքն ևս աւելցուց վերջաբանութեան մէջ։

1)։ — Ազգայի ազգային վարժարանը երկու մասն կըբաժնուի—'ի մի սկզբնական կամ ստորին, և 'ի մի բարձրագոյն ազգային վարժարանն։ Ազգային վարժարանին պակասաւոր և անաւարտ վերնայարկը ամենայն տեղ պէտք է շուտով 'ի կատար ածել, և ազգային մանուկներուն աւելի բարձր և հիմնաւոր կրթութիւն տալու դարմաններ որոնել։

2)։— Ստորին ազգային վարժարանէն խոկոյն գործնական կեանն մնող պատանիներուն պէտք է հնար տալ իրև ց կրթութիւնը շարունակելու և ընդարձակելու Փորթիլ'լուենդոշուլէ կոչուած ուսումնարաններու մէջ։ Նոր սերունդի հեռաւոր կրթութեանը ամենալաւ ու բաղմակողմանի կերպով սպասաւորելու համար, պէտք է՝ որ վարժապետաց նախապատրաստութեան վրայ աւելի խնամ տարուի։ Տէրութիւնը պարտաւոր է ամենայն զօրութեամբ պատսպարել զմանուկ սերունդը գործարանաց կողմէն նորա կրթութեանը պատճառուած վնասներու դէմ։

3)։— Բարձրագոյն վարժարանի ընդհանուր հիմքը սկզբնական, ստորին վարժարանը պէտք է լինի։ Առաջինը պարտաւոր է իր ստորին դասարաններու մէջ միայն ընդհանուր մարդկային կրթութիւն աւանդել։

4)։— Ազգային վարժարանի նպատակը զմարդս ներդաշնակ կերպով մարդ դաստիարակել է. ուստի ստորին ազգային վարժարանը կըպատրաստուի Պեստալոցցու դաստիարակչական և դասատուական սկզբունքներուն հաւատարիմ մնալ, հայեցողական մեթոտով ուսուցանել, և կրօնի դասատուութիւնը մանուքարթոֆոն Եղանոֆով աւանդել, այսինքն՝ աւելի մեծ շեշտ դնելով այն բանի վրայ, որն որ կըմիացնէ զմարդիկ, քան այն բանի՝ որն որ կըբաժանէ զնոսա։

5)։—Բարձրագոյն ազգային վարժարանը նոյն սկզբունքներուն հետևելով զաշակերտներն այնպէս կըկրթէ, որ նոքա հայրենասէր, գործնական և քաղաքական կեանքի համար պատրաստուած կորովի մարդիկ դառնան։ Ուսանելի առարկայից ընտրողութեան վերաբերութեամբ նա կըպարտաւորուի տեղական պիտոյքը 'ի նկատի ունենալ, ընդհանական կրթութիւն հաղորդել, նոր լեզուները խնամով տածել և Լատիներէն լեզուն իր մէջէն միանգամայն վերցնել։ Նորա պաշտօնն է աշակերտաց ճանաչելու և Կրնալու կարողութիւնը, նոցա ինքնագործունէութիւնը զարգացնել, և խրթին գիտական կրթութիւններէն հեռու մնալով ընդհանուր մարդկային կրթութեանը ծառայել։

6)։— Պէտք է որ դաստիարակչական սկզբունքը գիտական ու մասնաւոր դպրոցներու մէջ ևս աւելի՝ ազատ մուտք գտնէ։ Բարձրագոյն մասնաւոր դպրոցներու համար առանձին վարժապետներ պատրաստելը չափազանց հարկաւոր գործ է։ Հմուտ՝ բանիրուն՝ լեռվին կրթուած վարժապետներու

կարօտ են մանաւանդ մաթեմատիքական և բնագիտական ռէալ վարժարանները։

7)։— Ոչ մէկ մասնաւոր ուսումնարան իրաւունք չունի ընդհանուր մարդկային կրթութիւնը անտես թողնելու, եթէ որ նա չի ցանկար ստրուկ դառնալ դատարկ ու սին շահասիրութեան։

8)։— Իւրաքանչիւր վարժարանի ներքին օրգանիզասիօնը այնպէս պէտք է յարդարել, որ վարժապետաց ընկերութիւնը—ԿՈՒԼԻԿՈՒՄ—բարոյական մի խումբ կազմէ ու իր վրայ պատկերացնէ այն կեանքը, առ որ աշակերտները ժամանակով ինքեանք բարձրանալու են։

Պ. Լանդէի ճառի աղագաւ ծագած վէճերու աւարտելէն յետոյ՝ Պ. Մայր վարժապետը Վիէննայէն գեղեցիկ խօսքերով կ'առաջարկէ հանդիսականներուն՝ որ ընդհանուր մանկավարժական ժողովի 19-դ նիստը միւս տարի՝ այսինքն՝ 70 թ. Վիէննայի մէջ կատարուի, և նորա հրաւէրը ամբողջ ժողովի կողմէն գրեթէ միաբերան կընդունուի։ Պ. Նախագահը հեռագրով կը յայտնէ ժողովի կամքը Վիէննայի Քաղաքապետին ու Մարդիստրատին, և նոյն իսկ օրը հրաւիրական պատասխան կընդունի ի նոցանէ։

Թէև ժողովի պատկերը աւելի լրացնելու համար հարկ էր կրրորդ օրուայ մասին նա և վարժապետուհեաց ու ընագիտաց մասնաւոր նիստերու վրայ տեղեկութիւն տալ, բայց ես կը վերջացնեմ այս տեղ իմ հաշիւս. որովհետև եթէ բոլոր ճառերը թարգմանելու՝ և կամ նոցա բովանդակութիւնը գէթ համառօտիւ պատմել ուզենայի, օ՛չ թէ լրագրական յօդուած, այլ ամբողջ մի գիրք պէտք կըլլիներ յօրինել։ Ընդհանուր Մանկավարժական ժողովը շուտով Վիէննայ դումարուելու է. հոգւով չափ ուրախ կըլլինիմ, եթէ արժանանամ դարձեալ ներկայ գտնուիլ ի նմին, և զալոց անգամ աւելի կատարեալ հաշիւ տալ յարգոյ ընթերցողիս։

Փ. Վարդանեան։

ի Լայպցիգ։

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՕՐՕՐԴ ՄՕՐՆ ՈՐԴԻՆՈՒՐԻ

Օրօր ասեմ կենացս արև դառնուկիս,
Օրօր ասեմ նորածաղիկ զաւակիս.
Օրօրելով նաննիկ ասեմ մեղմագին,
Որ քաղցր քուն գայ քո սիրուն աչերին.
Օրօր դու իմ վարդակարմիր ու աղուակ,
Լայնաճակատ քաջասերունդ Հայ զաւակ.
Անոյշ քնով օրօրոցիդ քուն եղի՛ր,
Անոյշ սիրով Հայ ազգութեան զօրացի՛ր։

Օրօր ասեմ կենացս արև դառնուկիս,
Օրօր ասեմ նորածաղիկ զաւակիս.
Գիշեր ցորեկ թող անդադար և անքուն,
Ծիծ տամ քեզի՝ ամեղ զաւակ կաթնասուն,
Ծծիս հետ այլ Հայ ազգութեան և կրօնի,
Սնունդը տամ, որով լինիս դու արի.
Անոյշ յուսով արիութեան քուն եղի՛ր,
Անոյշ սիրով Հայ կրօնի զօրացի՛ր։

Օրօր ասեմ կենացս արև դառնուկիս,
Օրօր ասեմ նորածաղիկ զաւակիս.
Առիւծ Հայերն անյաղթ քաջերն աղգասէր,
Իրենց տղոց կաթ կը՛ամբեն աղգի սեր.
Դու այլ արդէն կաթով սորվի սիրելու
Կեանքէդ աւել ազգդ ու կրօնդ պահելու.
Անոյշ յուսով սուրբ կրօնիդ քուն եղի՛ր,
Անոյշ սիրով Հայ ազգութեան զօրացի՛ր։

Օրօր ասեմ կենացս արև դառնուկիս,
Օրօր ասեմ նորածաղիկ զաւակիս.
Զքնաղ դառնուկ՝ Հայրենեացդ փառքն անցել է,
Հայաստանի վայել չութիւնն կորել է.
Աղնիւ եղբարքդ երկրէ երկիր ցրուած են,
Շատի սրտեր միմիանցից թուլցած են.
Անոյշ յուսով Հայ եղբարցդ քուն եղի՛ր,
Անոյշ սիրով Հայ ազգութեան զօրացի՛ր։